№ 48 Հինգշաբթի Ապրիլի 28 1888 Հինգշաբթի Ապրիլի 28 № 48

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաֆֆիի մահը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Բաղուից· Նամակ Խմբագրին· Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Ռումինիայի ներքին դրութիւնը· Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ·—ԲՈՐՍԱ·—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Յակոբ Մէլիք-Յակոբեան (Բաֆֆի).

ԲԱՖՖԻԻ ՄԱՀԸ

Հայոց գրականութիւնը դարձեալ մի մեծ կորուստ կրեց։

Ներկայ ապրիլ ամսի 25-ին, կէս գիշերին, կարճատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեցաւ Թիֆլիսում, իր ընտանիքի շրջանում, իր կնոջ և երկու որդկերանց ներկայութեամբ, մեր յայտնի վիպագրող Յակոբ Մէլիք-Յակոբեան, որ յայտնի էր հայ ընթերցող հասարակութեանը ԲԱՖՖԻ կեղծ անունով։

Հանգուցեալի կենսագրութիւնը և նրա գրական գործունէութեան մասին մեր ունեցած կարծիքը ընթերցողը կը գտնի „Մշակի“ ներկայ համարի բանասիրականի բաժնում։

Արդեօք Բաֆֆի նիւթապէս ապահովված վախճանվեցաւ, և արդեօք նրա այրին իր երկու երեխաներով կարո՞ղ է ապահովված համարվել,—մեզ յայտնի չէ։ Միայն այսքան գիտենք՝ թէ այրին մերժել է որ և է դրամական օգնութիւն ընդունել Թիֆլիսաբնակ պարսկաստանցի մի քանի հայերից, որոնք առաջարկում էին իրանց հաշուով թաղել հանգուցեալին։

Հանգուցեալի հոգեհանգիստը կը կատարվի հինգշաբթի, ապրիլի 28-ին, երեկոյեան 7 ժամին, իր բնակարանում, որ գտնվում է Սօլոլակում, Նովո-Օրլովսկայա փողոցում։

Թաղումը կը կատարվի միւս օրը, այսինքն ուրբաթ օր, ապրիլի 29-ին, և յուղարկաւորութեան հանդէսը կը սկսվի առաւօտեան 9¼ ժամին հանգուցեալի բնակարանից դէպի Վանքի մայր-եկեղեցին։

Բաֆֆիի մահից յետոյ անմիջապէս կազմվեցաւ նրա բարեկամներից, Թիֆլիսի հայ ինտելիգէնցիային պատկանող շրջանից՝ մի յանձնաժողով, հանգուցեալի թաղման հանդէսի անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելու և տաղանդաւոր հեղինակի մարմինը պատշաճաւոր հանդէսով թաղելու համար։ Արդէն շատ տեղերից թէ յանձնաժողովը և թէ մեր խմբագրութիւնները ստացել են ցաւակցական հեռագիրներ, որոնք բոլորն էլ յանձնվում են յանձնաժողովին։

Մենք հաւատացած ենք, որ ուրբաթ օր, ապրիլի 29-ին, առաւօտեան 9 ժամին Թիֆլիսի ամբողջ հայոց հասարակութիւնը, առանց խտրութեան կրօնի, դասակարգերի և սեռի՝ կը դայ, կը հաւաքվի վերջին մնաս բարև ասելու Բաֆֆիին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Ապրիլի 15-ին

Հաստատ աղբիւրներից տեղեկացանք, որ Մ. Շահկեղամանեանցի մեքանագործարանը անցնում է Մոսկվայի գործարանատէր Գուստաւ Լիստի ձեռքը, որը այստեղ ևս ունի մի փոքրիկ գործարան։ Գործարանը կապալով է տրված տասը տարի ժամանակով, տարէնը 40,000 ռուբլիով։ Պ. Շահկեղամանեանցի գործարանը տեղիս նոյնատեսակ գործարաններից առաջինն էր համարվում, ոչ թէ միայն իր մեծութեամբ, այլ և իր կատարած գործերով։ Վերջին ժամանակներս նրա մէջ սկսել էին պատրաստել այնպիսի մեքենաներ և գործիքներ, որոնք առաջ պատրաստվում էին ուրիշ տեղերից, օրինակ ջրհան մեքենաներ, նաւթի համար վագոններ և ուրիշ բաներ։ Այդ մեքենագործարանի մէջ բանում էին 300-ից աւելի արհեստաւորներ, որոնց մեծ մասը կազմում էին հայերը։ Նոր արհեստաւորների համար միակ գործարանն էր, որտեղ նրանք գտնում էին իրանց համար ապաստարան և կատարելագործվում էին իրանց արհեստում։ Դրանց մեծ մասը հէնց այդտեղ էին ստացել իրանց արհեստագիտական ուսումը և հէնց այդտեղ էլ հայթայթում էին իրանց ապրուստի միջոցները։

Այդ գործարանի մէջ աշխատող արհեստաւորները տարբերվում են և իրանց բարոյական կենցաղավարութեամբ։ Նկատված է, որ այդտեղի արհեստաւորները բարոյապէս աւելի բարձր են, աշխատասէր են, ունեն սեր դէպի ընթերցանութիւնը, գիտեն հետաքրքրվել որ և է կողմնակի օգտաւէտ գործով և այլ յատկութիւններ, որոնցից զուրկ են մեծ մասամբ ուրիշ տեղի արհեստաւորները։ Այժմ դրանց դրութիւնն էլ տատանվող է, քանի որ յայտնի է օտարների վերին աստիճանի անհիւրասիրութիւնը հայ արհեստաւորների վերաբերութեամբ։ Այժմեանից իսկ կարելի է գուշակել, որ դրանց մեծ մասը պիտի զրկվեն իրանց տեղից և գուցէ նոյն իսկ արհեստաւորների վարձի քանակութիւնն էլ ընկնի, այնպէս որ այլևս ձեռնտու չը լինի այդ արհեստով պարապելը։ Աւելացնենք սրա վրա և այն, որ կապալով վերցնողը հրէայ է, որը իր արիւնակիցների մի քանի սովորութեան հետևելով, բոլորովին ուրիշ հայեացք կունենայ գործի վրա։

Տեղիս բազմաթիւ գործարաններում և արհեստանոցներում կան շատ հայեր, որոնք զուրկ են նոյն իսկ այբուբէնից։ Կամենալով նպաստել և տարածել դրանց մէջ գրագիտութիւն և տարրական գիտութիւն, մի քանի անձանց մէջ միտք է յղացել կիրակեայ դպրոց ունենալ, բայց մինչև այժմ այդ միտքը մի քանի հանգամանքների պատճառով չէր աջողվում։ Այժմ այդ մտադրութիւնը համարեա իրագործվելու վրա է, շնորհիւ Մարդասիրական Ընկերութեան, որը այսպիսի դէպքերում դիտէ օգնութեան ձեռք կարկառել։ Այդ նպատակով ընկերութիւնը ուր հարին է արդէն դիմել է իրաւունք խնդրելու, բայց դեռ պատասխան չէ ստացվել։ Առ այժմ կառավարչութիւնը յանձնված է ընկերութեան քարտուղար Գալստեանցին, իսկ ուսումնական մասը յանձն են առել դպրոցի ուսուցիչները։ Այդպիսի մի օգտաւէտ գործին կարելի է միայն ամբողջ սրտից աջողութիւն ցանկանալ և օր առաջ կատարված տեսնել։ Անկասկած, երբ այս անպայման օգտաւէտ գործը սկզբնաւորվի, շատերը կը շտապեն իրանց օգնութիւնը հասցնելու, որպէս զի հիմնվելիկիրակեայ դպրոցները կարողանան յիրաւի մի չոչափելի օգնութիւն ցոյց տալ Բաղուի զանազան գործարանների արհեստաւորներին, որոնց թիւը շատ մեծ է, և որոնց ընդհանուր վիճակը, մանաւանդ մտաւոր կողմից, այնքան աննախանձելի և խղճալի է, որ չէր կարող առանց ուշադրութեան մնալ։ Արհեստաւորների համար կիրակեայ դպրոցներ հիմնելու գործը, համոզված ենք, շուտով Բաղուի ամբողջ երիտասարդութեան ջանքերի առարկայ կը դառնայ, որը և կը լինի այդ գործի աջողութեան ամենամեծ գրաւականը։

Զ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 26-ին ապրիլի

Ամսիս 14-ից «Մշակի» 45 համարում Բաֆֆիի հիւանդութեան մասին մի քանի հարկաւոր տեղեկութիւններ էի հաղորդած։ Այնուհետև թոքի բորբոքումը բոլորովին լուծվեցաւ և հիւանդի առողջութիւնը սկսեց վերականգնել և որովհետև եղանակները լաւ էին, ամսիս 18-ից կարելի եղաւ թոյլ տալ հիւանդին կէսօրվայ տաք ժամանակին պատշգամբում, բազկաթոռի վրա նստած կէս ժամ, կամ մի ժամ օդ շնչելու։ Ամսիս 19-ին բժշկապետ Գասպարեանց վերջին անգամ այցելեց, իսկ հետևեալ օրերին՝ 20-ին և 21-ին այցելեցի օրն երկու անգամ, 22-ին և 23-ին օրը մի անգամ կէսօրի ժամանակ. հիւանդի ոյժերը շարունակում էին վերականգնել, թէպէտև Բաֆֆի թուլութիւն շարունակում էր զգալ։ Շաբաթ օր այցելութեան ժամանակ յայտնեցի Բաֆֆիին, որ կիրակի, ամսիս 24-ին, ոտնի պատճառով գուցէ նրան չը կարողանամ այցելել և ներողութիւն խնդրեցի։

Կիրակի, առաւօտեան 9½ ժամին հանդիպմամբ Բաֆֆիի բնակարանի կողմը լինելով, այցելեցի նա դիտէր ճիշդ այնչափ, որչափ հարկաւոր էր մի դիրք կարդալու և կարդացածը հասկանալու համար։ Բայց ինչպէս երևում է, նրա սկզբնական մտաւոր զարգացման աղբիւրը դարձեալ հայերէնն էր և այն էլ «Հիւսիսափայլի» ընթերցանութիւնը։ Ես պնդում եմ, որ իր առաջին մտքերով հանգուցեալը պարտական էր Նաղարեանցի չկոլային, որովհետև նրա առաջին դրուածքը, որ լոյս տեսաւ «Հիւսիսափայլի» մէջ և որ նկարագրում էր Աղթամարի վանքը, կարծես ներշնչված էր Նաղարեանցի ուղղութեամբ և ոգով։ Այդ դրուածքը, որ պարունակում էր իր մէջ մեր հոգևորականութեան այժմեան կազմակերպութեան պակասութիւնների և թերի կողմերի խիստ քննադատութիւնը, արդէն գուշակել էր տալիս Բաֆֆիի գրական գործունէութեան ապագայ ուղղութիւնը՝ նկարագրական ձևի կատարելութիւնը, հասարակաց տենդէնցիա և խիստ քննադատական ոգի։

—

1871 թվին ես արդէն թոյլտուութիւն էի ստացել «Մշակը» հրատարակելու և կազմակերպում էի խմբագրութիւնը, աշխատելով իմ չորս կողմը խմբելու ընդունակ, թէև գրականութեան մէջ դեռ ևս անյայտ երիտասարդներին։ Շաբաթը մի անգամ լինում էին ինձ մօտ խմբագրական երեկոներ։ Այն ժամանակ այդ երեկոներին լինում էր ուրիշների թւում և պ. Սենեքերիմ Արծրունի։ Մի օր պարոնը հրաւիրում է ինձ իր տունը, որտեղ նոյնպէս գրական երեկոյ պէտք է լինէր։ Այդտեղ տան տէրը ծանօթացնում է ինձ մի մարդու հետ, որին ինքն կարճ կերպով անուանում էր Յ ա կ ո բ։ Դա պարսկաստանցի Մէլիք-Յակոբեանն էր։ Մինչև որ ուրիշները բարձր ձայնով խօսում, վիճում էին, պարսկաստանցի երիտասարդը, որ այն ժամանակ իմ կարծիքով 30—35 տարեկան կը լինէր, լուռ նստած էր սենեակի մի անկիւնում և գրեթէ ամենևին չէր մասնակցում ընդհանուր խօսակցութեանը։ Այդ ժամանակ նա աննշան ռոճիկով հաշւապահ էր մի ինչ որ հայի խանութում։

Ընդհանուր տպաւորութիւնը, որ առաջին անգամ գործեց ինձ վրա Մէլիք-Յակոբեան, այն էր, որ զգալով ուրիշների, ինտելիգէնտ, համալսարանական մարդկանց մտաւոր գերազանցութիւնը, նա քաշվում էր մեր հասարակութեան մէջ որ և է վիճաբանութիւնների մէջ մասնակցելուց։ Նրա ամբողջ պատկերը, մեր շրջանում իրան յետ քաշված, լուռ պահելու կերպը՝ ցոյց էր տալիս, որ նա իրան պատահական հիւր էր համարում համալսարանականների շրջանում. այդ թուխ, շատ թուխ դէմքով, սև միրուքով, սև գանգուռ մազերով, կապոյտ ակնոցների միջից կարմրած, հիւանդոտ յուզված աչքերով մեզ վրա խորհրդաւոր լայն ճակատի տակից նայող մարդը՝ կարծես մեզ ամենիս դիտում էր, մեզ ուսումնասիրում էր, դեռ ևս իր ոյժերին հաւատ չընծայելով իրանից բարձր ուսում ստացածների հետ որ և է բանակռիւ մտնելու։ Պ. Սենեքերիմ Արծրունի ներկայացրեց ինձ Մէլիք-Յակոբեանցին, աւելացնելով, որ մարդը բազմաթիւ անտիպ գրուածներ ունի և կարող է պիտանի լինել նոր ծնվող «Մշակի» խմբագրութեանը։

Մէլիք-Յակոբեան սկսեց յաճախել և իմ խմբագրական ժողովները։ Ինչպէս ես նրան առաջին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ (ԲԱՖՖԻ)

—

Դարձեալ մի մահ....

Ապրիլի 25-ին, յիսուն տարեկանից անց հասակում, վախճանվեցաւ Բաֆֆի։

Ծերենցից յետոյ Բաֆֆի։ Հայոց գրականական ասպարիզի վրա գործողների շարքից հինները մէկ մէկ դուրս են գալիս, իսկ նորերը նրանց տեղը չեն բռնում։

Յիսուներորդ թուականները այն թուականներն էին, երբ արևմտեան եւրոպական գրականութեան ազդեցութեան տակ նոր ոյժով վերածնվեցաւ ռուսաց գրականութիւնը, իսկ ռուսաց գրականութեան ներդործութեան տակ սկսեց վերածնվել և ռուսա-հայոց աշխարհաբար գրականութիւնը։

Պարսկաստանում ծնված և արևմտեան եւրոպական քաղաքակրթութեան աւազանի մէջ մկրտված Ստեփաննոս Նաղարեանցն էր մեր աշխարհաբար գրականութեան վերածնութեան կարապետը և ժամանակակից հասարակական մտքի աւետաբեր։

Քառասուներորդ թուականների վերջերում և յիսուներորդ թուականների սկզբներում յայտնվեցաւ ռուսա-հայոց գրական, բուն ուսումնական ասպարիզում և մի այլ պարսկաստանցի հայի տաղանդը,—դա հայագէտ Մկրտիչ Էմինն էր, որի գրական-լեզուագիտական և պատմագրական հետազօտութիւնները հռչակ ստացան ոչ թէ միայն Ռուսաստանում, բայց և Եւրոպայումն էլ։

Հայոց մտքի այդ վերածնութեան շրջանի ներդործութեան տակ, որի պարագլուխները,—մինը հայոց հրապարակախօսութեան և փիլիսոփայութեան, միւսը հայոց լեզուագիտութեան և պատմագրութեան մէջ,—երկուսն էլ պարսկաստանցի հայեր էին, սկսեց նոյն յիսուներորդ թուականներում բողբոջել և մի այլ տաղանդ, նոյնպէս մի պարսկաստանցի հայ երիտասարդ։ Դա էր՝ Յակոբ Մէլիք-Յակոբեան, որ ժամանակով յայտնվեցաւ Բ ա ֆ ֆ ի ի կեղծ անունով։

Եւ ահա այդ Պարսկաստանը, որտեղ հայերը շատ քիչ թւով են, որտեղ հայութիւնը հետզհետէ մեռնում է, որտեղ առհասարակ մտաւոր կեանք չը կայ, տուեց միաժամանակ երեք հայ գրողներ....

Երբ Մէլիք-Յակոբեանի առաջին գրուածքը երևեցաւ «Հիւսիսափայլի» մէջ, նա ինքն դեռ երիտասարդ էր։

Պարսկաստանի Սալմաստ գաւառում ծնված Բաֆֆի պատանի ժամանակ բերվեցաւ Թիֆլիս, որտեղ նա ընդունվեցաւ որպէս գիմնազիայի աշակերտ։

Թիֆլիսի գիմնազիայում նա իր ուսումը չաւարտեց. դա էր նրա ամբողջ ուսումը։ Ուրեմն իր ամբողջ ուսումով և գիտութեամբ նա պարտական էր միմիայն իր անձնակրթութեանը, պարտական էր ընթերցանութեանը։ Ռուսերէն լեզուն նա դիտէր ճիշդ այնչափ, որչափ հարկաւոր էր մի դիրք կարդալու և կարդացածը հասկանալու համար։ Բայց ինչպէս երևում է, նրա սկզբնական մտաւոր զարգացման աղբիւրը դարձեալ հայերէնն էր և այն էլ «Հիւսիսափայլի» ընթերցանութիւնը։ Ես պնդում եմ, որ իր առաջին մտքերով հանգուցեալը պարտական էր Նաղարեանցի չկոլային, որովհետև նրա առաջին դրուածքը, որ լոյս տեսաւ «Հիւսիսափայլի» մէջ և որ նկարագրում էր Աղթամարի վանքը, կարծես ներշնչված էր Նաղարեանցի ուղղութեամբ և ոգով։ Այդ դրուածքը, որ պարունակում էր իր մէջ մեր հոգևորականութեան այժմեան կազմակերպութեան պակասութիւնների և թերի կողմերի խիստ քննադատութիւնը, արդէն գուշակել էր տալիս Բաֆֆիի գրական գործունէութեան ապագայ ուղղութիւնը՝ նկարագրական ձևի կատարելութիւնը, հասարակաց տենդէնցիա և խիստ քննադատական ոգի։

—

1871 թվին ես արդէն թոյլտուութիւն էի ստացել «Մշակը» հրատարակելու և կազմակերպում էի խմբագրութիւնը, աշխատելով իմ չորս կողմը խմբելու ընդունակ, թէև գրականութեան մէջ դեռ ևս անյայտ երիտասարդներին։ Շաբաթը մի անգամ լինում էին ինձ մօտ խմբագրական երեկոներ։ Այն ժամանակ այդ երեկոներին լինում էր ուրիշների թւում և պ. Սենեքերիմ Արծրունի։ Մի օր պարոնը հրաւիրում է ինձ իր տունը, որտեղ նոյնպէս գրական երեկոյ պէտք է լինէր։ Այդտեղ տան տէրը ծանօթացնում է ինձ մի մարդու հետ, որին ինքն կարճ կերպով անուանում էր Յ ա կ ո բ։

լեցի նրան իբր Զատիկ հնորհաւորելու, բայց զարմացայ գտնելով նրան ուշաթափութեան և ոյժաթափութեան մէջ. բորբոքումը կրկնվել էր, ջերմութիւնը հասած էր 40,5 աստիճանի հարցերիս Բաֆֆի անկապ հնչիւններ էր արձակում, դրութիւնը անյուսալի էր, իսկայն դիմեցի անձամբ բժշկապետ Գասպարեանցին խորհրդակցութեան համար։ Բժշկապետ Գասպարեանց այդ օր երեք անգամ այցելեց, բայց բոլոր գործ դրած միջոցները ապարդիւն անցան։ Բաֆֆի կնքեց իր կեանքը կէս գիշերին մէկ ժամից 10 րոպէ անց։

Բժշկապետ Գրիգոր Տէր-Մկրտչեան-Տէր-Գրիգորեանց Թիֆլիսեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ոչ թէ միայն Թիֆլիսում, այլ և գաւառներում, ինչպէս երևում է ստացված հեռագիրներից, մեր վիպասան Բաֆֆիի մահը ընդհանուր խօսակցութեան և ցաւակցութեան նիւթ է. տաղանդաւոր գրողի անսպասելի մահը ընդհանուր տխրութիւն է առաջ բերել ամեն տեսակ շրջաններում, սկսած բանւորների և արհեստաւորների ու վաճառականների շրջանից։ Շատ տեղերից արդէն հեռագիրներ են ստացված, որոնցով այս կամ այն շրջանները ներկայացուցիչներ են նշանակում թաղմանը ներկայ լինելու, կամ հանգուցեալի դագաղի վրա պսակներ դնելու համար։ Այդ մեծ համակրութեան անպայման արժանի է Բաֆֆի։

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ Պետերբուրգից, որ հրատարակվեցաւ «Страховое и транспортное» ընկերութեան կանոնադրութիւնը, որը հիմնված է ներկայ 1888 թուին։ Ընկերութիւնը ընդունում է կայքի, ապրանքի և կեանքի ապահովութիւնը և նոյնպէս ապահովացնում է մարմնի վնասվելուց։ Ընկերութեան հիմնական դրամագլուխը $2^1/_2$ միլիոն րուբլի է։

—

ԹԷԼԱՒԻՑ մեզ գրում են։ «Թէլաւը ունի երեք հայոց եկեղեցի, որտեղ կան 8 հոգի քահանաներ և քահանաների այդ թիւը կատարելապէս բաւական է Թէլաւի պէս քաղաքի հայոց ազգաբնակութեան համար։ Այդ պատճառով զարմանում ենք, որ հոգևոր իշխանութիւնը դիտաւորութիւն ունի, ինչպէս լսել ենք, դարձեալ իններորդ քահանայ էլ ձեռնադրել։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ ապրիլի 26-ին, Զատկի երրորդ օրը, Բագուի քաղաքային վարչութեան «Ալէքսանդրեան» դահլիճում պէտք է կայանար պ. Կարա-Մուրզայի այս տարվայ 2-որդ կօնցէրտը։ Խումբը բաւական կանոնաւորվել է և արդէն սկսել է եւրոպական նոտաներով երգել։ Այդ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ մշակվեցաւ «Պարսկաստանի նամակների» պրոգրամը, այդտեղ էլ ծնունդ առաւ Բաֆֆի կեղծանունը, որով Մելիք-Յակոբեան այնուհետև յայտնվեցաւ մեր գրական ասպարիզում։

Այն րոպէից սկսած Բաֆֆիի վիճակը կապվեցաւ «Մշակի» վիճակի հետ։ Նրա անունը, նրա հռչակը, նրա ժողովրդականութիւնը մեծանում էին, քանի աւելի և աւելի էր ընդարձակվում «Մշակի» գործունէութիւնը։ Գրեթէ ոչինչ սիստեմական ուսում չունեցող, ինքնակրթութեամբ զարդացած մարդը՝ մի տեսակ ներքին ազդմամբ, մի տեսակ հոտառութեամբ զուշակում էր ժամանակի պահանջը, տպաւորվում էր ժամանակակից հարցերով և արտայայտում էր այդ հարցերը վիպական ձևով։

«Մշակի» խմբագրութեան հետ իր վիճակը կապելուց յետոյ, Բաֆֆիի տաղանդի սահմանները և այդ տաղանդի ձևը հետզհետէ որոշվեցան։

—

Ինչպէս շատ անգամ ասել էի, գեղարուեստական գրուածների երկու ձև կայ. կան գեղարուեստական գրուածներ, որոնք նկարագրում են այն, ինչ որ կայ, ներկայացնում են այն տիպերը, որոնք գոյութիւն ունեն կեանքի մէջ, բայց կան և այնպիսի գեղարուեստական գրուածներ, որոնց նպատակն է ներկայացնել այնպիսի տիպեր, որոնք մի յայտնի հասարակութեան մէջ չը կան, բայց որոնք ցանկալի է թէ լինէին այդ հասարակութեան մէջ։

Այդ վերջին գրուածներին պատկանում էին և Բաֆֆիի հեղինակութիւնների մեծ մասը։ Թողնենք նրա մեծ մասամբ անաջող ոտանաւորները, նրա «Փունջի» մէջ պարունակվող փոքրիկ վէպերը, բայց վերցնենք նրա այն գրուածները, որոնք հռչակեցին հայերի մէջ Բաֆֆիի անունը,—և կը համոզվենք որ նրա ամենալաւ գրուածների, «Զալալ-Եդդին» «Խենդ», «Դաւիթ-բէկ» «Կայծեր» վերնագրով հեղինակութիւնների մէջ՝ միայն բընութեան նկարագրութիւնը, վէպի նկարագրական կողմը, ժողովրդական կեանքի, ժողովրդի կենցաղավարութեան նկարագիրը՝ վերին աստիճանի ըէալական՝ իրական են։ Գործող տիպերի մի մասը միայն, այն է վատ տիպերի նկարագիրը, թէև գուցէ դիտմամբ փոքր ինչ չափազանցրած է, բայց այնու ամենայնիւ կատարելապէս ըէալական է,—իսկ Բաֆֆիի գրուածների դլխաւոր նպատակը մի ձգտում է, մի տենդենցիա է՝ ներկայացնել այն կեանքը որ չը կայ, բայց որ պէտք է լինէր (յիշենք այստեղ «Խենդի» մէջ երգը), այն տիպերը, որոնք մեզանում դժբաղդաբար չը կան, բայց որոնց գոյութիւնը ցանկալի է մեր մէջ։

Բարձր, ազնուացնող հասարակաց իդէալներով ազգատ մեր կեանքի մէջ, անտարակոյս, մեծ դեր պէտք է ունենային և ունեցան էլ Բաֆֆիի գրուածներում ներկայացրած իդէալական, ցանկալի անձնաւորութիւնների և հասարակաց գործիչների բարոյական պատկերները. անտարակոյս պէտք է այդ ազնիւ, անձնուէր, թէև երևակայական տիպերը կրթիչ ներգործութիւն ունենային և ունեցան էլ համակրելի իդէալների միշտ ծարաւ երիտասարդութեան վրա։ Դրանով բացատրվում է Բաֆֆիի մեծ ժողովրդականութիւնը մեր երիտասարդ սերունդի մէջ, որ չէ քննում և չէ էլ կարող քննել որքան իրական կերպով է ներկայացրած իդէալը,—միայն թէ այդ իդէալը ամփոփէր իր մէջ այն բարձր ձգտումները, որոնց մասին երազում են երիտասարդական ոգևորվող գլուխները։

Բաֆֆի, պէտք է խոստովանվեմ, մեծ ծառայութիւն է մատուցել մեր հասարակութեանը, ափելով այդ հասարակութեան այլ և այլ խաւերում ազնիւ իդէալներ, որոնցով միշտ աղքատ է եղել հայոց գրականութիւնը, թող այդ իդէալները երևակայական լինէին և ոչինչ իրական հիմք էլ չունենային մեր հողի վրա.... Բաւական է, որ երևակայական, չեղած իդէալական տիպերը ստեղծագործվեցան գրքերի էջերում,—այնուհետև նոյն տիպերը, որոնք անշուշտ կրթիչ ազդեցութիւն ունեն ընթերցողի վրա, գուցէ ժամանակով կիրականանան, հոգի կառնեն, մարմին և արիւն կը դառնան, կը մարմնանան։

Բայց բացի «Մշակի» խմբագրութեան շրջանից, Բաֆֆիի տաղանդի զարդացման վրա, անկասկած, մեծ ներգործութիւն ունեցան և ժամանակակից անցքերը՝ ռուս-թիւրքաց պատերազմը, քրիստոնեաների մահմետական տիրապետութիւնից անցեալ թագաւորութեան բերանով յարուցած ազատութեան խնդիրը, և այլն։ Բաֆֆիի տաղանդը, այդ բնածին, ինքնուրոյն, ամեն սիստեմական ուսումից զուրկ տաղանդը, այնքան տպաւորվող էր, որ արձագանք էր տալիս բոլոր ժամանակակից այրվող, առօրեայ հասարակ բովանդակութեանը երկրորդական տեղ է տրվում և աւելի ուշադրութիւն են դարձնում սարքուկարգի և արտաքին շքեղութեան վրա։ Եւ պէտք է խոստովանել, որ պ. Ֆօրկատոի ամեն ջանք գործ է դրել այդ ֆէէրիան շքեղ կերպով ցոյց տալու հասարակութեանը։ Այդ ֆէէրիան մենք տեսել ենք Պետերբուրգում և այստեղի մի քանի տեսարանները աւելի աջողված էին քան այնտեղ։ Հասարակութեանը աւելի դուր եկաւ չորրորդ տեսարանը, որ ներկայացնում է հնդկական գերեզմանատուն, ուր փղի վրա բերում են թագուհուն իր ամուսնու դիակի հետ այրելու համար. նոյնպէս և եօթներորդ տեսարանը, որ ներկայացնում է հնդկական տաճար Բօրնէօ կղզու վրա, և իններորդ տեսարանը, որ ներկայացնում է երկաթուղու գնացք, որի վրա հնդկացիները յարձակվում են, տասներեքերորդը, որ ներկայացնում է ծովի ալիքների հետ կռուող ճանապարհորդներին և այլն և այլն։ Դերասաններից պ.պ. Ֆօրկատտի, Պերս, Լիլին և Սամարին բաւական լաւ էին իրանց անդոյն դերերում։ Թատրօնը կատարելապէս լի էր և անկասկած ամբողջ հասարակութիւնը կը գնայ տեսնել այս ֆէէրիան, որի նմանը երբէք չէ տեսնված Թիֆլիսում։

—

Երկուշաբթի, ապրիլի 25-ին քաղաքային թատրօնում, օպերետի դերասանների մի խումբ Թիֆլիսցիներին լաւ ծանօթ պ. Աբբենինի կառավարութեամբ սկսեց ներկայացումներ տալ։ Առ այժմ տալիս են նոյնպէս Թիֆլիսեցիներին լաւ յայտնի պ. Դեկեր-Շենկի «Հաջի-Մուրադ» օպերետը։ Օպերետի բովանդակութիւնը շատ անմիտ է և նրա մէջ ոչ մի ինքնուրոյն կտոր չը կայ։ Խառնված են Կովկասի մէջ շրջող և եւրոպական զանազան օպերաներից առնված եղանակներ։ «Էյլրաթից» յետոյ լսում ենք վալս Տրավիատայից, կամ «մրավալժամէից» յետոյ մի մազուրկա և այլն։ Կրկնել տուին առաջին գործողութեան մի դուէտ, որ յիշեցնում է մի ժամանակ օր. Գարագաշեանի երգած «Բօսֆորի ափերում» երգը։ Դերասանները ծանօթ են Թիֆլիսի հասարակութեան. նրանք քանի մի տարի առաջ երգում էին այստեղ օպերայում կամ օպերետում։ Տ.Տ. Պլօտնիցկայի և Վօլինսկայի շնորհով, կարելի է ասել, որ «Հաջի Մուրադը» մեր բեմի վրա աջողվեց։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Մեր տաղանդաւոր վիպասան Բաֆֆիի անսպասելի մահուան տխուր լուրը ամենածանր տպաւորութիւն թողեց այստեղ։ Հասարակութիւնը կարծէք շանթահար եղաւ այդ լուրը ստանալով, որը ամենայն արագութեամբ տարածվեց ժողովրդի բոլոր խաւերում։ Տխուր զգացմունքների րոպէին անդամ հասարակութեան զանազան շրջանները չը մոռացան իրանց սրտագին համակրութիւնը վերջին անդամ արտայայտելու դէպի տաղանդաւոր գրողը, և ուղարկեցին պսակներ հանգուցեալի դագաղի վրա դնելու համար։ Անկասկած Բագուն դեռ աւելի չօշափելի կերպով կարտայայտի իր համակրանքը դէպի մեր գրականութեան այդ արդիւնաւոր մշակը։»

—

Լսում ենք, որ հանգուցեալ հայ վիպասան Բաֆֆիի մարմինը պէտք է ամփոփվի Թիֆլիսի Խօջի-վանքը անուանված գերեզմանոցում։

—

Մեզ ուղարկված է մեր աշխատակից Լէօի «Պանդուխտ» վէպը, առանձին գրքոյկով տպագրած, հրատարակութիւն Արշակ Քալանթարի։ Այդ վէպը, որ շատ զգալի կերպով չօշափում է մեր հասարակական կեանքի այժմեան մի չարիքը՝ այն է պանդխտութեան հարցը, առաջ տրված է եղել «Մշակում», և այդ պատճառով մանրամասն խօսել նրա համար հարկաւոր չենք համարում։ Այսքանը կասենք, որ 70 երեսից բաղկացած այդ գրքոյկը, որի գինն էլ շատ էժան է նշանակված, այն է 15 կոպէկ, մեծ յարմարութիւն ունի ժողովրդական ընթերցանութեան համար՝ թէ մտքի, թէ լեզուի և թէ գրուածքի տեսակի կողմից։ Գիրքը տպված է Բագուում, Տէր-Յովհաննիսեանի տպարանում, որը ինչպէս երևում է՝ իբրև գաւառական տպարան շատ թերութիւններ ունի, չունենալով հայերէն գեղեցիկ տառեր և մաքուր տպագրութիւն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Յայտնի է, որ վերջին ամիսներում Ռումինիայի մէջ, գլխաւորապէս գիւղական ազգաբնակութեան շրջանում, անդադար նկատելի էր մի ներքին յուզմունք, մի ներքին իրարանցում, որը պարբերաբար կրկնվելով, վերջին ժամանակներս ստացաւ ապստամբական շարժումների կերպարանք։ Սկզբում այդ շարժումները համարվում էին հետևանք այն քաղաքական փոթորիկների, որոնք մինչև այժմ էլ շարունակվում են այդ փոքրիկ պետութեան մայրաքաղաքում՝ մի քանի միմեանց հակառակ կուսակցութիւնների մէջ։ Այդ քաղաքական-կուսակցական կռիւը այժմ էլ շարունակվում է, և դեռ երկար ժամանակ կը շարունակվի։ Սակայն դիպլոմատիական ինտրիգանների վրա հիմնված այդ քաղաքական մրցումները ինքն ըստ ինքեան այնքան նշանակութիւն չունեն, համեմատելով այն շարժումների հետ, որոնք առաջ են եկել գիւղական ազգաբնակութեան մէջ, և որոնք ոչ թէ քաղաքական կուսակցութիւնների պրոպագանդայի հետևանք են, ինչպէս կարծվում էր, այլ հողային հարցի հետևանք։

—

Այդ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ մշակվեցաւ «Պարսկաստանի նամակների» պրոգրամը, այդտեղ էլ ծնունդ առաւ Բաֆֆի կեղծանունը, որով Մելիք-Յակոբեան այնուհետև յայտնվեցաւ մեր գրական ասպարիզում։

Այն րոպէից սկսած Բաֆֆիի վիճակը կապվեցաւ «Մշակի» վիճակի հետ։ Նրա անունը, նրա հռչակը, նրա ժողովրդականութիւնը մեծանում էին, քանի աւելի և աւելի էր ընդարձակվում «Մշակի» գործունէութիւնը։ Գրեթէ ոչինչ սիստեմական ուսում չունեցող, ինքնակրթութեամբ զարդացած մարդը՝ մի տեսակ ներքին ազդմամբ, մի տեսակ հոտառութեամբ զուշակում էր ժամանակի պահանջը, տպաւորվում էր ժամանակակից հարցերով և արտայայտում էր այդ հարցերը վիպական ձևով։

«Մշակի» խմբագրութեան հետ իր վիճակը կապելուց յետոյ, Բաֆֆիի տաղանդի սահմանները և այդ տաղանդի ձևը հետզհետէ որոշվեցան։

—

Ինչպէս շատ անդամ ասել էի, գեղարուեստական գրուածների երկու ձև կայ. կան գեղարուեստական գրուածներ, որոնք նկարագրում են այն, ինչ որ կայ, ներկայացնում են այն տիպերը, որոնք գոյութիւն ունեն կեանքի մէջ, բայց կան և այնպիսի գեղարուեստական գրուածներ, որոնց նպատակն է ներկայացնել այնպիսի տիպեր, որոնք մի յայտնի հասարակութեան մէջ չը կան, բայց որոնք ցանկալի է թէ լինէին այդ հասարակութեան մէջ։

Այդ վերջին գրուածներին պատկանում էին և Բաֆֆիի հեղինակութիւնների մեծ մասը։ Թողնենք նրա մեծ մասամբ անաջող ոտանաւորները, նրա «Փունջի» մէջ պարունակվող փոքրիկ վէպերը, բայց վերցնենք նրա այն գրուածները, որոնք հռչակեցին հայերի մէջ Բաֆֆիի անունը,—և կը համոզվենք որ նրա ամենալաւ գրուածների, «Զալալ-Եդդին» «Խենդ», «Դաւիթ-բէկ» «Կայծեր» վերնագրով հեղինակութիւնների մէջ՝ միայն բընութեան նկարագրութիւնը, վէպի նկարագրական կողմը, ժողովրդական կեանքի, ժողովրդի կենցաղավարութեան նկարագիրը՝ վերին աստիճանի ըէալական՝ իրական են։ Գործող տիպերի մի մասը միայն, այն է վատ տիպերի նկարագիրը, թէև գուցէ դիտմամբ փոքր ինչ չափազանցրած է, բայց այնու ամենայնիւ կատարելապէս ըէալական է,—իսկ Բաֆֆիի գրուածների դլխաւոր նպատակը մի ձգտում է, մի տենդենցիա է՝ ներկայացնել այն կեանքը որ չը կայ, բայց որ պէտք է լինէր (յիշենք այստեղ «Խենդի» մէջ երգը), այն տիպերը, որոնք մեզանում դժբաղդաբար չը կան, բայց որոնց գոյութիւնը ցանկալի է մեր մէջ։

Բարձր, ազնուացնող հասարակաց իդէալներով ազգատ մեր կեանքի մէջ, անտարակոյս, մեծ դեր պէտք է ունենային և ունեցան էլ Բաֆֆիի գրուածներում ներկայացրած իդէալական, ցանկալի անձնաւորութիւնների և հասարակաց գործիչների բարոյական պատկերները. անտարակոյս պէտք է այդ ազնիւ, անձնուէր, թէև երևակայական տիպերը կրթիչ ներգործութիւն ունենային և ունեցան էլ համակրելի իդէալների միշտ ծարաւ երիտասարդութեան վրա։ Դրանով բացատրվում է Բաֆֆիի մեծ ժողովրդականութիւնը մեր երիտասարդ սերունդի մէջ, որ չէ քննում և չէ էլ կարող քննել որքան իրական կերպով է ներկայացրած իդէալը,—միայն թէ այդ իդէալը ամփոփէր իր մէջ այն բարձր ձգտումները, որոնց մասին երազում են երիտասարդական ոգևորվող գլուխները։

Բաֆֆի, պէտք է խոստովանվեմ, մեծ ծառայութիւն է մատուցել մեր հասարակութեանը, ափելով այդ հասարակութեան այլ և այլ խաւերում ազնիւ իդէալներ, որոնցով միշտ աղքատ է եղել հայոց գրականութիւնը, թող այդ իդէալները երևակայական լինէին և ոչինչ իրական հիմք էլ չունենային մեր հողի վրա.... Բաւական է, որ երևակայական, չեղած իդէալական տիպերը ստեղծագործվեցան գրքերի էջերում,—այնուհետև նոյն տիպերը, որոնք անշուշտ կրթիչ ազդեցութիւն ունեն ընթերցողի վրա, գուցէ ժամանակով կիրականանան, հոգի կառնեն, մարմին և արիւն կը դառնան, կը մարմնանան։

Բայց բացի «Մշակի» խմբագրութեան շրջանից, Բաֆֆիի տաղանդի զարդացման վրա, անկասկած, մեծ ներգործութիւն ունեցան և ժամանակակից անցքերը՝ ռուս-թիւրքաց պատերազմը, քրիստոնեաների մահմետական տիրապետութիւնից անցեալ թագաւորութեան բերանով յարուցած ազատութեան խնդիրը, և այլն։ Բաֆֆիի տաղանդը, այդ բնածին, ինքնուրոյն, ամեն սիստեմական ուսումից զուրկ տաղանդը, այնքան տպաւորվող էր, որ արձագանք էր տալիս բոլոր ժամանակակից այրվող, առօրեայ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական Ֆրիդրիխ կայսրին, ինչպէս հաղորդում են լրագիրները, բժշկում է այժմ, բացի գերմանական բժիշկներից և Ֆրանսիացի երևելի բժիշկ Ֆովէլ։ Ֆրանսիական լրագիրները հիացած են, որ Ֆովէլ կանչվեցաւ Շարլոտտէնբուրգ և ասում են, որ եթէ Ֆրանսիացի բժիշկը կը բժշկէ գերմանական կայսրին, դա կը լինի Ֆրանսիայի կողմից ամենաազնիւ վրէժխնդրութիւն 1870 թ-ի պատերազմի համար։

—Կ. Պոլսի «Արևելք» լրագիրը հաղորդում է, որ Պէշիկթաշի ազգային գերեզմանոցի խնդրի նկատմամբ սուլթանի կողմից եղած վերջին իրադէի հրատարակելուց յետոյ, որ հրամայում էր գերեզմանոցը թողնել իր վիճակի մէջ և պատապարել, մաքուր պահպանելու մասին հոգ տանելով, Կ. Պոլսի ազգային ժողովը որոշեց յանձնարարել Պէշիկթաշի թաղական խորհրդին, կայսերական իրադէի համնման փութալ անյապաղ պատսպարել գերեզմանոցը և մաքուր ու վայելուչ պահել նրան։

—Կ. Պոլսի հայոց Կրօնական ժողովը սկսեց հրատարակել «Հայաստանեայց եկեղեցի» անունով կրօնական մի շաբաթաթերթ։

—Հռոմի պապը, ինչպէս հաղորդում են Դուբլինի անգլիական լրագիրները, մի կոնդակ է հրատարակել, որով պարսաւում է Իրլանդիայի ազգասիրական կուսակցութեան գործողութեան եղանակը կալուածատէր-լորդերի և կառավարութեան դէմ։ Այդ կոնդակը մեծ տպաւորութիւն գործեց Անգլիայում և Իրլանդիայում։ Կարծում են որ իրլանդացիք այդ պատճառով չեն փոխի իրանց բռնած ընթացքը, այլ ընդհակառակն պապի հեղինակութիւնը նշանաւոր կերպով կընկնի Իրլանդիայի հասարակաց կարծիքի աչքում։

—Անգլիական թագուհի Վիկտորիա արդէն թողեց Շարլոտտէնբուրգ և վերադարձաւ Անգլիա։ Լրագիրները հաւատացնում են, որ թագուհու Բերլին եղած ժամանակ Գերմանիայի մայրաքաղաքի ժողովուրդը բաւական սառն կերպով ընդունեց նրան։

—Արտաքսմանեան լրագիրները հաւատացնում են, որ իբր թէ Բաւարիայի և Աւստրո-Ունգարիայի մէջ գաղտնի դաշն կայ, որի հիման վրա Բաւարիան պէտք է զօրքով օգնէ Աւստրիային որ և է պատերազմի դէպքում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲԵՐԼԻՆ, 20 ապրիլի։ Առաւօտեան 9 ժամին կազմված բիւլլետէնի մէջ ասված է, որ կայսրը գիշերը լաւ անցրեց և իրան լաւ է զգում. ջերմը աւելի թուլացաւ։

Կ. ՊՕԼԻՍ, 20 ապրիլի։ Բէլգրադում մինիստրութեան փոխվելու պատճառով այստեղ ապրող սերբերը շատ յուզված են և դիտաւորութիւն ունեն բողոքով դիմելու Միլան թագաւորին։

ԱԹԷՆՔ, 20 ապրիլի։ Կ. Պոլսից ստացված նամակների համեմատ, տիեզերական պատրիարքը դիտաւորութիւն ունի իբրև թէ սինոդի հետ միասին հրաժարական տալ, եթէ որ Բ. Դուռը չը վերականգնեցնէ իրանց պաշտօնների մէջ հրաժարեցրաց միտրոպոլիտներին Մակեդոնիայում։ Պատրիարքը յայտարարում է, որ Բ. Դուռը արդելում է եկեղեցուն կատարելու իր միսիան։

ՎԻԵՆՆԱ, 20 ապրիլի։ Հապից ստացված տեղեկութիւնների համեմատ, հօլանդական թագաւորի առողջական դրութիւնը անյուսալի է։

ՓԱՐԻԶ, 20 ապրիլի։ Վերանորոգված հայրենասիրական լիգան պահանջում է Գերմանիայի հետ կապված խաղաղական դաշնագրի վերաքննութիւնը և Էլզաս-Լոթարինգիայի ազատութիւնը։

ԿԱՏԻ-ԿՈՒՐԳԱՆ, 21 ապրիլի։ Սամարկանդի երկաթուղու աշխատանքների մօտաւոր վախճանը դրդեց տեղական բամբակ ցանողներին ամէրիկական սերմեր ցանելու համար պատրաստել անցեալ տարվանից երկու անգամ աւելի ընդարձակ հող։ Սակայն, ամբողջ Ցուրկեստանում եղած անընդհատ անձրևների և սաստիկ սառը գարնան պատճառով բամբակը դեռ ևս ոչ մի տեղ չէ ցանված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 ապրիլի։ Անցագրերի փոխանակ 10 տարի ժամանակով անցագրական տետրակներ տալու լուրը հաստատվում է։ Այդ հարցը կը քննվի պետական խորհրդի այժմեան սեսիայում։—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհուրդը հաստատեց առևտրական նաւահանգիստներ չինելու նախագիծը։ Բոլոր առևտրական նաւահանգիստները երեք կարգ են բաժանվում։ Փոքր նաւահանգիստները ստորադրվում են շրջանի առաջին կարգի նաւահանգստին։ Այն առևտրական նաւահանգիստները, որոնք անբաժան են զինուորական նաւահանգիստներից և կամ մօտիկ են վերջիններից, ենթարկվում են զինուորական նաւահանգիստների բոլոր պայմաններին։ Առևտրական նաւահանգիստների գլխաւորներ նշանակվում են նաւատորմի կամ շտուրմանների կօրպուսի օֆիցէրներ։—Նոյն լրագիրը հաղորդում է, որ այս տարի կը սկսվին սկզբնական աշխատանքներ Սամարա-Ուֆիմեան երկաթուղին շարունակելու համար Ուֆայից մինչև Զլատօուստ. իսկ այդ վերջին կէտից երկաթուղին շարունակելու հարցը դեռ ևս չէ պարզված։ «Новости» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի Սլաւօնական բարեգործական ընկերութեան նախագահ կոմս Իգնատիէվ յանձն առաւ ռուսերի մկրտութեան ինն հարիւրամեակը տօնելու բոլոր պատրաստութիւնների ղեկավարութիւնը։ Մի և նոյն լրագիրը հաղորդում է, որ մայիսի 4-ին Պետերբուրգում կը կայանայ առաջին խմբի երկաթուղիների ներկայացուցիչների ժողովը, իսկ մայիսի վերջին կամ յունիսի սկզբին կը կայանայ Մոսկվայում այն երկաթուղիների կոնֆէրէնցիա, որոնք մասնակցում են ուղղակի միջազգային հաղորդակցութիւններում։

ՓԱՐԻԶ, 21 ապրիլի։ Դէրուլէդ «Temps» լրագրում տպված նամակում յայտնում է, որ ի նկատի առնելով ներքին դժուար դրութիւնը, հայրենասիրական լիգան ժամանակաւորապէս կը դադարի արտաքին քաղաքականութեամբ զբաղվելուց։

ԲԵԼԳՐԱԴ, 21 ապրիլի։ Սերբիական դեսպաններին ուղարկած շրջաբերականի մէջ արտաքին գործերի մինիստրը բացատրում է կառավարութեան պրօգրամը և յայտարարում է, որ կառավարութիւնը ոչ մի կուսակցութեան չէ պատկանում, թոյլ տալով իւրաքանչիւրին գործողութեան ազատութիւն օրինական սահմաններում։ Իսկ ինչ որ վերաբերում է արտաքին քաղաքականութեան, կառավարութիւնը կաշխատէ պահպանել լաւ յարաբերութիւններ բոլոր պետութիւնների հետ Սերբիայի ազգային անկախութիւնը պահպանելու համար։

Կ. ՊՕԼԻՍ, 21 ապրիլի։ Կրիտի նահանգապետ է նշանակված Նիկօլակի-էֆէնդի Սարտինակի, Փարիզի թիւրքաց դեսպանատան նախկին խորհրդականը։

ՎԻԵՆՆԱ, 21 ապրիլի։ Մինիստրութիւնը, ըստ երևոյթին, դիտաւորութիւն ունի դիջումներ անել չէխերին և հեռացնել մինիստրութիւնից ժողովրդական լուսաւորութեան մինիստր Գաուչին, որը իր ուսումնարանական պրօգրամով գրգռեց նրանց բարկութիւնը։

ԲԵՐԼԻՆ, 21 ապրիլի։ Կայսրուհին ճանապարհ ընկաւ դէպի Էլբայի ներքնավայրերը հեղեղից վնասված տեղերը այցելելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի։ Երէկ կողոպտելու նպատակով սպանված գտան տիկին Միկլուխա-Մակլային, յայտնի ճանապարհորդի մօրաքրոջը, և նրա ծառային։ Գլխաւոր մարդասպանը, Կօրօլէվ ազգանունով, հանգուցեալի նախկին ծառայի որդին, կալանաւորված է մօր հետ միասին. յանցանքի համախոհներին որոնում են։

ԱԹԷՆՔ, 22 ապրիլի։ Թիւրքաց դեսպանը յետ չէ կանչվում։ Դա կարող է ապացոյց լինել, որ Յունաստանի և Թիւրքիայի մէջ յարաբերութիւնները լաւացել են։

ՀՌՕՄ, 22 ապրիլի։ Կրիսպի, պատասխանելով Իտալիայի և Ֆրանսիայի մէջ եղած յարաբերութիւնների մասին հարցապնդման՝ ասեց, որ Գերմանիայի և Աւստրիայի հետ ունեցած դաշնակցութեան նպատակն էր խաղաղութիւն պահպանել, և որ այդ միակ դաշնակցութիւնն է, որ համապատասխանում է Իտալիայի ցամաքային շահերին, այն ինչ Անգլիայի հետ դաշնակցութիւնը այնպիսի մի դաշնակցութիւն է, որ համապատասխանում է Իտալիայի ծովային շահերին։ Ինքըն Կրիսպի միշտ անհրաժեշտ է համարել այդ դաշնակցութիւնները։ Իտալիան, իր ծագման պատճառով, պէտք է պաշտպանէ ազգութիւնների իրաւունքները. իսկ դաշնակցութիւնները նպատակ ունեն ապահովել Իտալիան անսպասելի անցքերի դէմ։ Ֆրանսիայի հետ յարաբերութիւնները լաւ են և Իտալիան չի միանայ Ֆրանսիայի դէմ ուղղված յարձակողական քաղաքականութեանը։ Միջերկրական ծովը չի դառնայ իտալական լիճ, բայց նա ֆրանսիական ևս չի լինի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի։ Բարձրագոյն Պալատը զատական դիշերը Պետերբուրգ է գալիս, Զըմեռնային Պալատի եկեղեցին հանդիսաւոր կերպով գնալու համար։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ հարաւ-արևմտեան ճանապարհների ընկերութիւնը շուտով կը սկսի չինել Ուսմանեան ճիւղերը։ Նոյն լրագրին հաղորդում են Ելցից, որ մայիսի վերջին կաւարտվի զէմստվոյի առաջին էլէվատօրի կառուցումը։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ, 23 ապրիլի։ Ցուցահանդիսի բացումը վերջնականապէս նշանակված է մայիսի 6-ին։ Ցուցահանդիսին ներկայ գտնվել ցանկացող օտար լրագիրների թղթակիցները պէտք է ներկայացնեն իրանց վկայագիրները մայիսի 4-ից ոչ ուշ։

ԲՐԻՍԵԼ, 23 ապրիլի։ «Independance Belge» լրագիրը հաղորդում է, որ կոմս Վալէնշտէյնի տեղ Պետերբուրգում աւստրիական դեսպան է նշանակվում կոմս Դէյմ, որը այժմ աւստրիական դեսպան է Մինխընում։

ԲԵՐԼԻՆ, 23 ապրիլի։ Կայսրը աւելի լաւ է. նրա առողջութեան մասին հրատարակվող բիւլլետէնները դադարեցրած են։

ԲԷԼԳՐԱԴ, 23 ապրիլի։ Բիզօեալից և Մօնաստիրից եկողները պատմում են, որ յոյների և սերբիացիների մէջ մէկ կողմից, և թիւրքերի մէջ միւս կողմից այն տեղերում արիւնահեղ ընդհարումներ են տեղի ունեցել։

ՎԻԵՆՆԱ, 23 ապրիլի։ Դքսուհի Կլէմէնտինա, որը այժմ Վիեննայումն է գտնվում, արձակում է Կօբուրգեան իշխանի այստեղի պալատական շտատը և ծախում է նրա ժողովածուները։

ԲԵՐԼԻՆ, 23 ապրիլի։ Կայսրը վերկացաւ անկողնից և զեկուցումներ է ընդունում։

ՀՌՕՄ, 23 ապրիլի։ Կամէր-իւնկէր Իզվօլսկի շարունակում է բանակցութիւնները Ամարդիի հետ։ Յունիսին կը կայանայ հանդիսաւոր կօնսիստորիա, ուր պապը կը ձեռնադրէ լեհական մի քանի եպիսկոպոսներ։

հարցերին. նրա բոլոր ստեղծագործած տիպերը նոյն իսկ նրա պատմական վէպերի տիպերը, այդ պատճառով խոնարհվում էին տէնդէնցիային, ստանում էին նրա գրչի տակ այն երևակայական, իդէալական կերպարանքը, որ գուցէ պատմութեան իրականութեան մէջ երբէք էլ ունեցած չէին։ Ոչ «Խենդի» հերոսի պէս մի տիպ կայ հայերի մէջ, ոչ «Դաւիթ-բէկի» պէս, ոչ «Կայծերի» մէջ ներկայացրած համակրական տիպերի պէս,—բայց դրանք հարկաւոր էին մեզ կրթելու, մեզ ներկայացնելու համար այնպիսի տիպեր, այնպիսի իդէալներ՝ որոնց ցանկալի էր թէ մենք ձգտէինք։

Այդ է պատճառը, որ եթէ Բաֆֆիի բոմաններին բոլոր տիպերը խիստ, անողորմ քննադատութեան ենթարկենք՝ նրա ներկայացրած վատ տիպերը բոլորն էլ իրական, բնական կը գտնենք, որովհետև նրանք կան, նրանք կենդանի են մեր մէջ. իսկ նրա ստեղծագործած լաւ տիպերը հոգեբանական խիստ, անողորմ, անաչառ քննադատութեանը չեն դիմանայ, որովհետև արուեստական են, իրական կեանքի մէջ գոյութիւն չունենալով և ստեղծված լինելով հեղինակի հարուստ երևակայութեան մէջ՝ յատկապէս հասարակութեան վրա կրթիչ, դաստիարակիչ ներգործութիւն ունենալու նպատակով։

Բաֆֆիի ամենանշանաւոր գրուածներից երկուսը միայն կատարելապէս զուրկ են իդէալական տիպերից և կատարելապէս բէալական են, իրանց բոլոր անմխիթար կողմերով՝ սրանք նրա «Ոսկի Աքաղաղ» և «Խաչագողի յիշատակարան» վէպերն են։

Բայց անցաւ ռուս-թիւրքական պատերազմի ժամանակը, իր բոլոր բարձր իդէալներով, վրա հասաւ սովորական կեանքի խաղաղ և անդոյն ընթացքը, մի և նոյն ժամանակ վերջին տարիները Բաֆֆիի հեռացաւ և «Մշակի» խմբագրութիւնից, որի շրջանում նա անտարակոյս առատ սքանչելի էր ստանում իր տաղանդը բեղմնաւոր անելու համար,—և վերջին ժամանակ նրա տաղանդը կարծես սկսեց սպառվել, հաստատ հող կորցնել իր ոտների տակ.... Հարկաւոր էր այդ ժամանակ փոխել գրելու ձևը, գրելու սիստեմը, կեանքի ուրիշ շարք երևոյթների վրա դարձնել նրա ուշադրութիւնը, հարկաւոր էր ներգործել նրա վրա, համոզել նրան՝ այսուհետև թողնել իդէալական տէնդէնցիան և դիտել, ուսումնասիրել իրականութիւնը և նկարագրել այդ իրականութիւնը.... Բայց այդպիսի ներգործող շրջանի չը հանդիպեց տաղանդաւոր հեղինակը և ընկաւ ծայրայեղութեան մէջ՝ նա սկսեց զբաղվել այնպիսի գրական ձևով, որ ամենևին յատուկ չէր իր տաղանդին, և որին, իմ կարծիքով, նա անպատրաստ էր. դա պատմական բոման էր, որի մէջ այլ ևս առաջվայ պէս չէր փայլում Բաֆֆիի տաղանդը։

Բաֆֆի ստեղծված էր տէնդէնցիական գրող լինելու։ Երբ որ կեանքը այլ ևս տէնդէնցիայի նիւթ չէր տալիս նրան, նա պէտք է բէալիստ, իրական. կեանքը դիտող, ուսումնասիրող և նկարագրող դառնար։ Եւ ուղիղ այդ տեսակ գրական ձևը մեծ մասամբ աջողվում է գրողներին իրանց հասունացած տարիքում, 40—55 տարեկան հասակում։

—

Այստեղ հարկաւոր եմ համարում յիշել, որ բացի վիպական գրուածներից հանդուցեալը ունի բազմաթիւ պուբլիցիստական յօդուածներ, որոնք տպվեցան տարիների ընթացքում «Մշակի» մէջ «Մէլիքզադէ» ստորագրութեամբ։ Այնուհետև «Փորձ» ամսագրում նա տպում էր իր ճանապարհորդութիւնը, իսկ նրա վերջին պատմական «Սամուէլ» վերնագրով վէպը նախ տպվում էր «Արձագանքում» և ապա հրատարակվեցաւ առանձին գրքով։

Բացի գրական գործունէութիւնից, Մէլիք-Յակոբեան մի քանի ժամանակ ուսուցչութիւն էր անում թէ Վերին-Ադուլիսի և թէ Թավրիզի հայոց դպրոցներում։

—

Վերջին ժամանակները Բաֆֆի ապրում էր Թիֆլիսում իր կնոջ և երեխաների հետ։ Երկու շաբաթ սրանից առաջ նա հիւանդացաւ թոքերի բորբոքումով։ Նրան բժշկում էր բժշկապետ Տէր-Գրիգորեան, որը իր կողմից կանչել էր համախորհրդի բժշկապետ Գասպարեանցին։ Չատկի շաբաթ օրը բժշկապետ Տէր-Գրիգորեան այնքան կազդուրված գտաւ հիւանդին, որը արդէն վեր էր կացել անկողնուց, որ մինչև անգամ յայտնեց նրան թէ այլ ևս ամեն օր այցելելու չէ նրան, այլ կը գայ օրամէջ և խոստացաւ գալ միայն երկուշաբթի օր, մի և նոյն ժամանակ պատուիրելով հիւանդին զգոյշ լինել ուտելու, խմելու մէջ, զգուշանալ մրսելու կողմից։ Բայց դարձեալ բժշկապետը չը համբերելով զնում է հիւանդի մօտ Չատիկ առաւօտեան, Բաֆֆիին չնորհաւորելու,—և յանկարծ ներկայանում է նրան հետևեալ տեսարանը. այն մարդը, որ նախընթաց օրը ոտքի վրա էր և ինքն ջրում էր իր բնակարանի բալկօնում դարսած ծաղիկները, հանդիսա կերպով խօսելով բժշկի հետ, գրեթէ կատարելապէս կաղդուրված, թէև դեռ ևս թոյլ,—այդ մարդը պառկած է անկողնում, ուշքը կորցրած, լեզուն կապ, ջերմի մէջ, չը կարողանալով մի խօսք անգամ արտասանել, չը կարողանալով աջ ձեռքն ու աջ ոտքը շարժել։

Գիշեր ժամանակ հիւանդը ուղեղի հարուած էր ստացել և նրա աջ ձեռքն ու աջ ոտքը անդամալոյծ էին եղել։ Չը նայելով երկու բժիշկների օգնութեան, մի քանի ժամից յետոյ, նոյն ապրիլի 25-ին, Բաֆֆի վախճանվեցաւ։

Անմիջապէս Թիֆլիսի հայ ինտելիգէնցիայի մի խումբ կազմեց մի յանձնաժողով տաղանդաւոր հեղինակի թաղման կարգադրութիւնը և պատրաստութիւնները տեսնելու համար։

Ասում են որ պարսկաստանցի հայերը ուզում էին յանձն առնել Բաֆֆիի թաղման ծախսը, բայց հանդուցեալի այրին մերժեց այդ օգնութիւնը, յայտնելով որ հայ գրողը պէտք է թաղվի իր գրական աշխատանքով վաստակած փողով։

Ուրբաթ, ապրիլի 29-ին Թիֆլիսի հայոց հասարակութեանը կը վիճակվի տխուր պարտաւորութիւնը թաղելու «Խենդի», «Դաւիթ-բէգի» և «Կայծերի» հեղինակին։

Գրիգոր Արծրունի

ԲԵՐԼԻՆ, 25 ապրիլի։ Կայսրի առողջութիւնը վատացաւ, որի պատճառով կուրսն ընկաւ։

ՓԱՐԻԶ, 25 ապրիլի։ Երէկ ամբողջ Ֆրանսիայում քաղաքային ընտրութիւններ կատարվեցան, որոնք ընդհանրապէս բարեյաջող էին հանրապետութեան համար. մի քանի դէպարտամէնտներում մի քանի աղմկալից ցոյցեր եղան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 ապրիլի։ Բարձրագոյն պալատի մինիստրութեան գլխաւոր կօնտրօլեօր Պէտրով նշանակված է Նորին Կայսերական Մեծութեան գրասենեակի կառավարիչ։

ԲԵՐԼԻՆ, 26 ապրիլի։ Երէկ կէսօրից յետոյ կայսրը աւելի լաւ զգաց իրան և կարողացաւ նորից պարապել։

ՓԱՐԻԶ, 26 ապրիլի։ Բուլանժէ ընտրվեցաւ Տիվլում, գինարանի բանւորների վճռով, տեղական քաղաքային վարչութեան խորհրդի անդամ։ Օրբաթ օր Բուլանժէ ուղևորվում է դէպի Հիւսիսային դէպարտամէնտը, որտեղ նա կայցելէ մի քանի քաղաքներ և ներկայ կը գտնվի ի պատիւ իրան տրվելի ճաշկերոյթներին Լիլլում և Սէն-Կէնտէնում։

Կ. ՊՕԼԻՍ, 26 ապրիլի։ Վճռված է ամրութիւններ կառուցանել Աղրիանօպոլի և Չատալջիի մօտ։ Կ. Պոլսից ոչ հեռու գտնվող Չատալջիում կազմակերպվում է 50,000 հոգուց բաղկացած մի զօրաբանակ։ Մակէդոնիայից հաղորդում են, որ այդտեղ կրկին երևեցան նոր զինաւորված հրոսակներ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 26 ապրիլի։ Երէկ մօտաւորապէս 10 ժամին երեկոյեան, մի ոստիկան, որ նախ հրաժարեցրած էր ծառայութիւնից և ապա նորից ստացաւ և ընդունվեցաւ քաղաքային ոստիկանութեան ծառայութեան մէջ, երկու անդամ հրացանից արձակեց թագաւորական պալատի պատուհանի վրա, և կոտրեց ապակին։ Նա անմիջապէս ձերբակալվեցաւ, բայց շարունակում էր սպառնալիքներ արտասանել թագաւորի վերաբերմամբ։ Կարծում են որ ոստիկանը հարբած էր և զայրացած էր, որովհետև նրան հրաժարեցրին ծառայութիւնից։

ՑԷՏԻՆԻԷ, 27 ապրիլի։ Երէկ, հանդիսաւոր մաղթանքից յետոյ, իշխան Նիկոլայ զօրապետների և ժողովրդի ներկայութեամբ հաստատեց օրէնքների նոր ժողովածուն, որը մշակել է պրոֆէսսոր Բոգիչէվիչ։ Մի և նոյն ժամանակ կարդացվեցաւ իշխանի մի հրովարտակը, որի մէջ շնորհակալութիւն է յայտնվում Ալէքսանդր II-ին և Ալէքսանդր III կայսրին—բոլոր սլավեանների հովանաւորողին, և նոյնպէս օրինագրքի հեղինակին։ Վերջը իշխանը մի երկար ճառ արտասանեց, որը ժողովրդի կողմից ընդունվեցաւ «ժիվիո» աղաղակներով։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 27 ապրիլի։ Ասում են, որ թագաւորական պալատի պատուհանների վրա հրացան արձակող ոստիկանը մի կուսակցութեան գործիք էր և իր վարմունքը արդարացնում էր նրանով, որ չէ ցանկանում օտարականին տեսնել բուժական գահի վրա։

ՍՕՖԻԱ, 27 ապրիլի։ Բուլգարական կառավարութիւնը չէ թոյլ տալիս միտրոպոլիտ Կլիմէնտին կատարելու իր քահանայապետական պարտաւորութիւնները Տիրնօվոյում։ Զրինցի մերձաւորները լուր են տարածում, որ եթէ իր դէմ գործ կը դրվեն հարկադրիչ միջոցներ, այն ժամանակ ինքն կը հրատարակէ Բուլգարիայի անկախութիւնը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 26-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	121	ր. 40	›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	59	› 50	›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	47	› 85	›
Ոսկի — արժէ — . .	9	› 65	›
Մաքսային կուպօններ — . .	192	› 50	›
Արծաթ — — — . . .	1	› 40	›
Բօրսային դիսկօնտներ — .	5³/₄%	› 7%	›
Պետակ. բանկ. 5% առաս 1-ին չրջանի	99	› 25	›
— — — — 2-րդ —	98	› 62	›
— — — — 3-րդ —	98	› 50	›
— — — — 4-րդ —	98	› 50	›
— — — — 5-րդ —	98	› 50	›
— — — — 6-րդ —	—	› —	›
Նոր 4% փոխառութիւն	82	› 87	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	99	› —	›
— — 2-րդ —	98	› 12	›
— — 3-րդ —	98	› 25	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	269	› —	›
— երկրորդ —	243	› —	›
5½% բէնտա	103	› —	›
Ոսկեայ բէնտա.	200	› 25	›
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	170	› 75	›
Նոր երկաթուղային բէնտա . . .	98	› 50	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	170	› —	›
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . .	97	› 87	›
5½% գրաւական թղթեր խերսօնի կալուած բանկի.	99	› 50	›
6% գրաւակ. թղ. խարկովի կալ. բան.	100	› 75	›
— — Պօլտավայի— —	101	› —	›
— —Պետ.Ցուլսկ.— —	101	› —	›
— — Կիևի — —	101	› —	›
— — Մօսկվայի — —	102	› —	›
— — Բեսարաբ. Տավր.—	100	› 50	›
— — Նիժ. Սամար. —	101	› —	›
— — Վիլնայի —	101	› —	›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	98	› 50	›
— —Քուրսկի—18 և 43 տ.	98	› 50	›
Վլադիմիրո-Կամսկի բանկի ակցիաները	707	› —	›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	272	› 50	›
Ռիբինսկ-Վոլգովի ընկ.	100	› 75	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	95	› 37	›
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	94	› 50	›
Օդեսայի — — .	94	› —	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օ. .	83	› 50	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ

Россійское Общество Застрахованія капиталовъ и доходовъ

УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան հիմնված 1835 թ-ին

Ամենահին և միակ ռուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարապում է կեանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

1. Կապիտալների ապահովութիւնը ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում։
2. Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆՔԸ ապահովացնելու համար։
3. Եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը։

Տարիֆները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վ. Ելիսաւետինսկայա փողոց, տուն № 24.

Գլխաւոր Ագէնտ և Ցեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒԶԷՆԲԷՐԳ։

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար։ 1—32 (Հ)

ԿԵՐՕՍԻՆԻ ՊԱՀԵՍՏ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԴԷՊՕ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԷԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

գտնվում է Վօկզալի մօտ, Կասպեան-Սև-Ծովի նաւթարդիւնաբերական ընկերութեան պահեստում, նախկին Կարտվելօվի

ԿԵՐՕՍԻՆԻ ԵՒ ՄԱԶՈՒՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

5—25 (Հ)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ։

ՀԱՆՔԱՑԻՆ ԶՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիշերի մէջ նոր ածված ցեցից եւ միջատներից պահպանող միջոցներ, նաֆթալին, քամֆորա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը։

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ պրոֆէսսոր ԿԻՏՏԱՐԱՑԻ, կարբոլացրած փոշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը իստակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլորային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարգանեցի կրկնաթթուտ։

94—100 (Հ.)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ

ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ КОРОБКА 50 К.

ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ БОЛЬШ. ФЛАКОНЪ 30 К.

ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ КОРОБКА 30 К.

СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ, ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկերի, Սէնչիկովսկու և Ադմոնրովի դեղատներում։ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ Բէկկէրի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։

(Հ.)

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի Ալէքսանդր Արարատեանի „ԳԱՒԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ“ գիրքը (հեղինակի պատկերով)։ Ուստի խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք յիշեալ գրքի համար բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարե հաճեն ուղարկել բաժանորդագրութիւնները և դրամը, որպէս զի կարող լինեմ զետեղել գրքի վերջում բաժանորդների անուանացուցակը։

Այրի Շուշանիկ Արարատեան 2—3

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՑԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԷՆԿԼԷՎՍԿԻ—11—12 ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և ատամների ց.
ՍՕԲՕԲԷՎ—11—12 ժ. ատամնաբոյժ.
Ա. ԳՈՒՐԿՕ—12—1 ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ՉԱԵՎՍԿԻ—5—7 ժ. ջղային ց. և էլեկտրօ-տերապիա.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց ց.
Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մօզեր։
Վճար—50 կ։ Համախորհրդի (կօնսիլիումի) համար համաձայնութեամբ։ Մշտական անկողիններ.

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՕՎՍԿԻ

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ։

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

Գործարան Գ. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԷՐԱ կոչված թաղում։

44—50

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ԿԱՄ ԵՐԿՈՒ ՍԵՆՅԱԿ

կահաւորված, բոլոր յարմարութիւններով, ծառայով և ճաշով։

ИЩУТЪ ОДНУ БОЛЬШУЮ ИЛИ ДВѢ КОМНАТЫ меблированныхъ, со всѣми удобствами, прислугою и со столомъ. Адресъ оставить въ агентствѣ Бебутова и К°.

3—5

ՀԻՒՐԱՆՈՑՈՒՄ ՏԷՂԻ ԵՑՈՂ

ՀԻՒՐԱՆՈՑՈՒՄ ՏԷՂԻ ԵՑՈՂ

ՆԵՄԵՑԿԱՅԱ ԳՈՍՏԻՆՆԻՑԱ

ՎԱՐՇԱՎԱ

31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դլուգայա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն իսկ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՕՆՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՕՆԱՏԵՂԵՐԻ կողքին։ 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական վարձով։

ԿՕՆԴԻՏԷՐԻԱ և ՐԷՍՏՕՐԱՆ

ճաշեր 30 կոպէկից մինչև 1 ռուբլի։

ՕՄՆԻԲՈՒՍՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար։

ԿԱՌՔԵՐԻ վարձը չափաւոր գներով։

(Հ)

ԲԱԳՈՒԻ „ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ“ ընդունում է ամեն տեսակ գրքեր կօմիսիայով վաճառելու համար,

Հասցէն. БАКУ, „Каспійская Книжная Торговля“ Седраку Тараянцу.

6—15 (Հ)

Дозволено цензурою, Тифлисъ 28 Апрѣля 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.